

## Տեղեկատվություն

**ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի «Աուդիտորների որակավորման քննությունների անցկացման կարգը և քննությունների ծրագիրը հաստատելու մասին»»**

**N 123-Ն որոշման 1.1-ին և 1.2-րդ կետերի պահանջների վերաբերյալ**

ՀՀ կառավարության 2005 թվականի փետրվարի 3-ի «Աուդիտորների որակավորման քննությունների անցկացման կարգը և քննությունների ծրագիրը հաստատելու մասին»» N 123-Ն (16.02.2012թ. 143-Ն որոշման խմբագրությամբ) որոշման (այսուհետ՝ Որոշում) 1.1-ին կետով սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում է օտարերկրյա պետությունների համապատասխան կառույցների կողմից Հաշվապահների միջազգային դաշնության կրթական ստանդարտներին համապատասխան կազմված ծրագրերով անցկացված քննությունների արդյունքում որակավորված մասնագետների որակավորումը, եթե դիմողը ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը՝

ա) դիմում,

բ) անձնագրի պատճենը,

գ) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,

դ) 2 լուսանկար՝ 3x4 չափսի,

ե) մասնագիտական որակավորման վկայականի պատճենը՝ տրված սույն կետով սահմանված համապատասխան մարմինների կողմից,

զ) վկայականը տված մարմնի հավաստումն այն մասին, որ վկայականը ներկայումս ուժի մեջ է կամ անդամության վկայականի պատճենը:

Նույն որոշման 1.2-րդ կետի համաձայն՝ Որոշման «1.1-ին կետով սահմանված փաստաթղթերն օտար լեզվով ներկայացվելու դեպքում դրանց հետ պետք է ներկայացվեն նաև դրանց՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կատարված թարգմանությունները: Օտարերկրյա պետություններից ստացված փաստաթղթերը պետք է ներկայացվեն հյուպատոսական վավերացմամբ կամ ապոստիլով:»>>:

Այդ կապակցությամբ հայտնում ենք հետևյալը:

Եթե դիմորդի կողմից ներկայացվող փաստաթուղթը նրան տրամադրվել է <<Օտարերկրյա պաշտոնական փաստաթղթերի օրինականացման պահանջը չեղյալ հայտարարելու մասին>> 1961 թվականի հոկտեմբերի 5-ի Հաագայի կոնվենցիային միացած երկրների կողմից, ապա այդ փաստաթղթի ներկայացման դեպքում անհրաժեշտ է ապոստիլի առկայությունը:

Մնացած երկրների կողմից տրամադրված փաստաթղթերը ենթակա են լեգալիզացիայի և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կատարված թարգմանության:

ԱՊՀ անդամ երկրներից ներկայացված փաստաթղթերի դեպքում անհրաժեշտ է միայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կատարված թարգմանությունը:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կատարված թարգմանություն է համարվում <<Նոտարիատի մասին>> ՀՀ օրենքի 68-րդ հոդվածով նախատեսված նոտարի կողմից կատարված թարգմանությունը: <<Նոտարիատի մասին>> ՀՀ օրենքի 68-րդ հոդվածով սահմանվում է, որ նոտարը վավերացնում է փաստաթղթի թարգմանության իսկությունը, եթե նա տիրապետում է համապատասխան լեզուներին: Եթե նա չի տիրապետում համապատասխան լեզուներին, փաստաթուղթը թարգմանում է նոտարի կողմից վստահված թարգմանիչը, որի ստորագրության իսկությունը վավերացնում է նոտարը: <<Նոտարիատի մասին>> ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն, Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունները և հյուպատոսական հիմնարկները կատարում են հետևյալ նոտարական գործողությունները՝ վավերացնում են փաստաթղթերի թարգմանության իսկությունը:

Ինչ վերաբերում է անձնագրին, ապա անձնագիրը, որպես կանոն, բոլոր երկրներում վավեր փաստաթուղթ է և անձնագրի դեպքում անհրաժեշտ է միայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կատարված թարգմանությունը: